ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բնության նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը

նախադպրոցական տարիքում

Վերապատրաստվող՝ Էլյա Սամվելի Մաիլյան

Արմավիրի մարզ, Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց» մանկապարտեզ

ՀՈԱԿ

Վերապատրաստող՝ Լիանա Վերդյան

ԵՐԵՎԱՆ **2023**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1. էկոլոգիական դաստիարակությունը ՆՈՒՀ-ում 4

1.1 ՆՈՒՀ-երում բնության նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումն ըստ պետական չափորոշչի և պետական կրթական ծրագրերի 4

1.2 էկոլոգիական կրթության և դաստիարակության ձևերը ՆՈՒՀ-ում.....8

Գլուխ 2. Փորձարարական հետազոտություն.....10

Եզրակացություն 17

Օգտագործված գրականության ցանկ 18

Հավելվածներ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Բնության նկատմամբ դրական վերաբերմունքն այսօր համամարդկային և համաշխարհային հիմնահարցերից մեկն է, քանի որ վտանգված է մեր «տունը»՝ Երկիր մոլորակի գոյությունը:

Հնդկացի առաջնորդի խոսքերն առավել քան պատկերավոր են ներկայացնում վերահաս վտանգը. «Երբ կկտրվի վերջին ծառը, երբ կթունավորվի վերջին գետը, երբ կսպանվի վերջին թռչունը, այդժամ Դուք կհասկանաք, որ փողը հնարավոր չէ ուտել»:

Այս խոսքերը հուժկու ազդակ են էկոլոգիական և բնապահպանական աղետի շեմին կանգնած բոլոր արարածների համար՝ ի դեմս Մարդու, որի բանականությունն ու գործողությունները այսօր պետք է նպատակաուղղված լինեն մեր ընդհանուր «տունը» փրկելու գործին:

Թեմայի նպատակը: էկոլոգիական պատկերացումների, կրթության և դաստիարակության հիմքերը դրվում են ՆՈՒՀ-ՈՒՄ, այդ իսկ պատճառով այն նպատակ ունի սաների մոտ ձևավորել էկոլոգիական գիտակցություն: Դեռևս վաղ տարիքից երեխային միավորելով բնությանը՝ բնության հանդեպ ձևավորվում է պատասխանատու վերաբերմունք՝ որպես բնության կարևորագույն և անբաժանելի մաս, մենք նրանց մասնակից ենք դարձնում բնապահպանական գործընթացին՝ իրենց տարիքին և կարողություններին համապատասխան:

Գլուխ **1.** էկոլոգիական դաստիարակությունը ՆՈՒՀ-**ՈՒՄ**

1.1 ՆՈՒՀ-**ՈՒՄ** բնության նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումն ըստ պետական չափորոշչի և պետական կրթական ծրագրերի

Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության իրատեսական նպատակն է ձևավորել հետաքրքրասեր և կյանքի հմտություններով օժտված սան, ով պատրաստ է շփման մեջ մտնել շրջապատող աշխարհի հետ, ով պատրաստ է համագործակցության և հնարավոր դժվարությունների հաղթահարման:

Բնության նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու անհրաժեշտությունն այսօր կապված է մարդ- -բնություն--հասարակություն խախտված շղթայի հետ, որն էլ իր հերթին պայմանավորված է այսօր աշխարհի տարբեր ոլորտներում տեղի ունեցող սրընթաց փոփոխություններով և զարգացման արագընթաց տեմպով:

Այսօր ՆՈՒՀ-ի առջև ծառացած խնդիրներից է սաների մեջ ձևավորել և զարգացնել ճանաչողական և մոտիվացիոն կարողունակությունը, որը կօգնի դրսևորել անվտանգ և բարեկիրթ վարք, կսովորեցնի գնահատել սեփական անձը և պատճառահետևանքային կապեր տեսնել կյանքի տարբեր իրավիճակներում և բնության մեջ, երեխային զգացնել տալ բնության անբաժանելի մասնիկը լինելու իրողությունը:

Եթե այսօր մենք լուծենք «Ինձ շրջապատող աշխարհը» ծրագրային բաղադրիչին ներկայացվող խնդիրները, ապա կունենանք շրջապատում և զանազան իրավիճակներում արագ ու ճիշտ կողմնորոշվող անձ՝ զինված իր տարիքին համապատասխան գիտելիքներով և կարողություններով, կունենանք արտաքին աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին համարժեք արձագանքող անհատ:

Այդ արձագանքը կարող է դրսևորվել տարիքային առանձնահատկություններին համապատասխան, քանի որ Նախադպրոցականը հաճույքով է ուսումնասիրում շրջապատի բուսական և կենդանական աշխարհը, փորձում է հասկանալ մարդկանց և նրանց կենսակերպի արտաքին առանձնահատկությունների մեջ եղող տարբերությունները, հուզականորեն է ընկալում բնության գեղեցկությունն ու անկրկնելիությունը, բնության երևույթները և այլն:

Երեխան իր ճանաչողական հետաքրքրություններն ու ունակությունները զարգացնում է շրջակա միջավայրին ծանոթանալու միջոցով, ընդլայնում է մտահորիզոնը և ձեռք բերած գիտելիքներն ամրապնդում ՝ըստ նպատակի դրանք օգտագործելու և կիրառելու համար: Այս գործընթացում առաջին պլան է մղվում կրթադաստիարակչական զարգացնող և մոտիվացնող պլանավորված աշխատանքը, որը շարունակական է և անընդհատ:

Ելակետային է այս ողջ գործընթացի ժամանակ հաշվի առնել երեխաների տարիքային և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների կարևորությունը: Որքան էլ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ արտահայտվի շրջակա միջավայրի և աշխարհի վերաբերյալ հետաքրքրությունն ու հարցասիրությունը, այնքան նրանք խոցելի են իրենց տարիքային և անհատական առանձնահատկություններն անտեսելու դեպքում, քանի որ ճանաչողական պահանջմունքների և գիտելիքների ծանրաբեռնվածության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել հոգեբանական և ֆիզիոլոգիական լուրջ խնդիրների առաջացմանը: Կարող է խաթարվել երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացը ՝կորցնելով իր նշանակությունը փոքրիկի համար:

Այդ նպատակով այսօր ողջ աշխարհում մշակվում են նախադպրոցական տարիքի համար նոր չափորոշիչներ և ծրագրեր, որոնց գերագույն խնդիրն է ճիշտ և համակարգված քայլերով կազմակերպել մանկապարտեզում կրթադաստիարակչական պատասխանատու գործընթացը, որի արդյունքում վաղը կունենանք կյանքին պատրաստ և ժամանակի պահանջներին համապատասխան սերունդ:

Ժամանակավրեպ ծրագրերին և մեթոդներին փոխարինելու են գալիս օրվա պահանջները բավարարող նորամուծություններն ու նորարարությունները կյանքի բոլոր ոլորտներում:

Որպես երեխայի անձի ձևավորման և զարգացման կարևորագույն և վճռորոշ ժամանակահատված՝նախադպրոցական կրթությունը չէր կարող շրջանցել կրթական բարեփոխումներն ու անտեսել դրանք:

ՀՀ-ում ևս կրթական բարեփոխումների եռուն շրջան է այսօր:Փորձարկվում են կրթական համակարգ մտած նոր ծրագրերն ինչպես դպրոցում, այնպես էլ ՆՈՒՀ-երում: Այս ամենն ինքնանպատակ չէ, քանի որ որոշ ՆՈՒՀ-երում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է դեռևս հին չափորոշչին և կրթական ծրագրերին համապատասխան:

Սակայն արդեն գործարկվում է նոր կրթական չափորոշիչը՝ հաստատված 13.05.2021:

Փորձարկվող մանկապարտեզների միջոցով կյանքի են կոչվում նոր կրթական ծրագրերը՝ լրամշակված նոր չափորոշչի հենքի վրա: Ըստ դրա՝ այսօր ՆՈՒՀ-երում ուսումնադաստիարակչական աշխատանքը կազմակերպվում է ըստ ծրագրային բաղադրիչների՝նախկին մեթոդիկաների փոխարեն (և, իհարկե, ըստ տարիքային խմբերի):

1.Խոսքի զարգացում (ԽԶ)

2.Ինձ շրջապատող աշխարհը (ԻՇԱ)

3.Մաթեմատիկական տարրական պատկերացումներ (ՄՏՊ)

4.Ֆիզիկական դաստիարակություն (Ֆ)

5.Երաժշտություն(Ե)

6.Կերպարվեստ և կառուցողական աշխատանք (ԿԿԱ)

Սակայն նոր բաղադրիչների զատումը պայմանական բնույթ է կրում, որովհետև դրանք փոխկապակցված են և նպաստում են սանի համակողմանի և լիարժեք զարգացմանը:

Ծրագրային բոլոր բաղադրիչներով սահմանված վերջնարդյունքներն ուղղված են առանցքային կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

«Ինձ շրջապատող աշխարհը» ծրագրային բաղադրիչի հիմքում ընկած է ճանաչողական և մոտիվացիոն կարողունակությունը, ըստ որի վերոնշյալ բաղադրիչին առաջադրվող նպատակներից մեկը հետևյալն է ՝ ձևավորել պատկերացումներ սեփական անձի, շրջակա միջավայրի կենդանի և անկենդան աշխարհի, բնության երևույթների մասին:

Ծրագրային այս բաղադրիչի նպատակներից էլ բխում են մի շարք բնապահպանական խնդիրներ, այդ թվում ՝

ա) մշակել շրջապատի նկատմամբ հոգատար և գիտակցական վերաբերմունք, ձևավորել բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման սովորույթներ և հմտություններ: Ծանոթացնել վարքի կանոններին՝

բ) ձևավորել բնության տարրերի պատճառահետևանքային տարրական կապերը հասկանալու կարողություն

գ) շարունակել ձևավորել բնության մեջ ճիշտ վարքագիծ դրսևորելու հմտություն:

1.2 Էկոլոգիական կրթության և դաստիարակության դերը ՆՈՒՀ-ում

«Կրթությունը գիտելիքների բանակը չի, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես»:

Դիստերվեգ

Քանի որ մարդն իր գոյությամբ հանդիսանում է էկոհամակարգի առանցքային միավոր, դրա համար հարկավոր է դեռ նախադպրոցական տարիքում երեխաներին զինել էկոլոգիական նախնական պատկերացումներով, կյանքում և բնության մեջ եղող պատճառահետևանքային անխզելի կապերի հետ ծանոթացնելով՝ նախապատրաստել դպրոցին, որտեղ նրանք կկիրառեն իրենց ճանաչողական պատկերացումները և մանկապարտեզում ձևավորված կարողություններն ու հմտությունները:

Այսօրվա նախադպրոցական ծրագրերի բարեփոխումներից մեկն էլ այն է, որ նախկին նախադպրոցական ծրագրերում ամրագրված «Էկոլոգիական դաստիարակություն» մեթոդիկան միավորվել է ԻՇԱ բաղադրիչին ներկայացվող նոր ծրագրերի մեջ ՝որպես նախադպրոցահասակ երեխաների աշխարհաճանաչողության և կրթադաստիարակչական կարևորագույն պահանջ և նպատակ:

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ձևավորվող ճանաչողական և մոտիվացիոն կարողունակության հիմքում (ըստ նոր չափորոշչի) ընկած են այնպիսի նպատակներ, որոնք կնպաստեն երեխայի տարիքին համապատասխան ոչ միայն ճանաչողական նախնական պատկերացումների ձևավորմանը, այլ դրանք կյանքում կիրառելի դարձնելուն:

Մինչև 20-րդ դարի 90-ական թվականները էկոլոգիական կրթության համակարգում գերակայող էր մարդակենտրոն մոտեցումը, որի համաձայն մարդը բնության տերն ու տիրակալն է, հետևաբար կարող է վերափոխել և ծառայեցնել բնության բարիքները սեփական կարիքները բավարարելու գործընթացին՝ լայնորեն և անխնա սպառելով բնության պարգևներն անհատական կարիքների համար:

Սակայն, բարեբախտաբար, վերոնշյալ կործանարար մոտեցումն այլևս անցյալում է, և սպառողական հոգեբանությանն այսօր փոխարինում է էկոկենտրոն մտածելակերպը, որի նպատակն է փրկել Երկիր մոլորակը էկոլոգիական աղետից:

Մի շարք մանկավարժներ առաջ են մղել այն տեսությունը, ըստ որի երեխան նախադպրոցական տարիքում արդեն ընկալում և հասկանում է բնության մեջ գոյություն ունեցող բազմաբնույթ շղթայական կապերը՝ ընդունակ պատկերացնելու բնության ամբողջությունը:

ՆՈՒՀ-ի կարևորագույն գործառույթներից է այսօր ձևավորել սաների մոտ էկոլոգիական մշակույթի տարրեր և էկոլոգիական գիտակցություն՝ շրջակա միջավայրի հանդեպ հուզական, պատասխանատու վերաբերմունքով և բնապահպան գործունեությամբ դրսևորվող:

Ղազարոս Աղայանը, որպես «ուսուցիչների ուսուցչապետ», կարևորում է բնության հետ ներդաշնակ հարաբերությունների հաստատման կարևորությունը և անհրաժեշտությունը, խորհուրդ է տալիս մանկավարժական աշխատանքում առաջնորդվել բնությանը բնորոշ կանոնակարգվածությամբ և ներդաշնակությամբ: Իսկ այդ առաքելությունը նախադպրոցական տարիքում իրականացվում է նախնական պատկերացումների ձևավորման միջոցով՝ երեխաներին նախապատրաստելով կյանքի հաջորդ փուլերին:

Գլուխ 2. Փորձարարական հետազոտություն

Փորձերի և փորձարարության դերն այսօրվա դիդակտիկայում անգնահատելի է՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի մեթոդ: Փորձարարության ցանկությունը բնորոշ է նախադպրոցական տարիքի երեխաներին, որոնք միշտ պատրաստ են ուսումնասիրելու երևույթների ներքին հատկություններ և կապերը փորձարկումների միջոցով:

Սա երեխաների որոնողական գործունեության յուրահատուկ ձև է, ներքին ակտիվության վառ դրսևորում: Երեխաների որոնողական փորձարարական գործունեությունը պրոբլեմային ուսուցման հիմնական եղանակն է:

Թեմա՝ «Փրկենք մեր մոլորակը»

Տեսակը՝ ինտեգրված պարապմունք (խոսքի զարգացում+էկոլոգիա+երաժշտություն)

Նպատակը՝

Կրթական: Ամրապնդել երեխաների պատկերացումները բնության մեջ տեղի ունեցող պատճառահետևանքային կապերի բնության երևույթների վերաբերյալ, ներկայացնել մարդու կատարած աշխատանքը բնության մեջ:

Զարգացնող: Զարգացնել վերլուծական մտածողությունը, սեփական անձը կարևորելու և բնապահպանական վարքագիծ դրսևորելու կարողությունը:

Դաստիարակչական: Դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք բնության և նրա յուրաքանչյուր մասնիկի հանդեպ՝ հաղորդակից դարձնելով բնության գեղեցկությանն ու կարևորությանը: Դաստիարակել հետաքրքրություն ազգային սովորույթների և ժողովրդական երգերի հանդեպ:

Բառապաշարի հարստացում: Հարստացնել բառապաշարը զարնանամուտ, սերմնացան, կանաչ գոտի, երկրի թոքեր բառերով և բառակապակցություններով :

Անհրաժեշտ պարագաներ: Արկղիկ, Երկիր մոլորակի անգույն և գունավոր պատկերներ, հասկեր, տարազային վերնահագուստ :

Պարապմունքն անցկացվել է ավագ խմբում, պարապմունքին մասնակցել է 30 երեխա:

Տևողությունը ՝ 30 րոպե:

Ընթացքը

Ներս է մտնում դաստիարակը՝ կանաչ թիկնոցով կախարդական արկղիկը ձեռքին:

Դաստիարակ –Ողջույն, երեխանե՛ր, ես անտառի Կանաչ փերին եմ և ձեզ եմ բերել հրաշքներով լի այս փոքրիկ արկղը: Սակայն այն կբացվի միայն այն ժամանակ, երբ գուշակեք հանելուկը:

Նա մեր տունն է,

Մի մեծ գունդ է,

Պտտվում է արևի շուրջ

Գիշեր-ցերեկ

Ու չի հոգնում:

Երեխաներ -Երկիր մոլորակն է:

Դաստիարակ -Ճիշտ է, իսկ հիմա բացեք մեր կախարդական արկղիկը:

Երեխաներից մեկը բացում է արկղիկը և այնտեղից հանում Երկիր մոլորակի անգույն պատկերը (Տե՛ս Նկար 1):

Դաստիարակ -Երեխաներ, ի՞նչ գույն ունի մեր մոլորակը:

Երեխաներ -Սև ու սպիտակ է նկարը:

-Ուրիշ գույներ չկան:

Դաստիարակ -Իսկ ի՞նչ տրամադրություն ունի մեր Երկիր մոլորակը:

Երեխաներ -Նա տխուր է ու լաց է լինում:

Դաստիարակ -Ճիշտ է, երեխաներ, մեր Երկիր մոլորակը տխուր է ու լաց է լինում և մեզ խնդրում է օգնել իրեն: Եվ ես անտառից եկել եմ, որ միասին օգնենք ու բուժենք մեր հիվանդ մոլորակին, առողջացնենք նրան ու մեզ: Մենք կօգնենք, որ մեր մոլորակը էլի գտնի իր գույները, էլի ժպտա ու մեզ տա իր բարիքները: Բայց այդ ամենը շատ դժվար է, իսկ դուք պատրա՞ստ եք օգնել ինձ, որ գտնենք Երկիր մոլորակի կորած գույները:

Երեխաներ —Այո՛, պատրաստ ենք, բայց ինչպե՞ս օգնենք մեր հիվանդ մոլորակին:

Դաստիարակ -Հիմա ես ձեզ կպատմեմ չար Սնժպիտի մասին, և դուք ամեն ինչ կիմանաք: Երեխաներ, երբ որ մենք ժպտում ենք և բարություն ենք տարածում, սիրում ենք իրար և իրար օգնում, խնամում ենք բնությունը և պաշտպանում, մեր մոլորակը շատ գունավոր և գեղեցիկ է դառնում, մեր անտառները ավելի կանաչ և ծաղիկները ավելի հոտավետ են դառնում, օդը մաքուր է լինում, իսկ երկնքից ժպտում է պայծառ արևը: Բայց

չար Անժպիտը դա չի սիրում, և գողացել է մեր Երկիր մոլորակից ծիծաղն ու բարությունը, բոլոր գույները չֆացան աշխարհից, իսկ մարդիկ չարացան և սկսեցին կտրել ծառերը, տրորել ծաղիկները, սպանել թռչուններին և կենդանիներին: Անտառները կամաց-կամաց վերանում են, երեխաներ, իսկ մեր մոլորակը հիվանդացել է մարդկանց չարությունից և խնդրում է օգնել իրեն:

Իսկ ի՞նչ կլինի, եթե անտառ չլինի Երկիր մոլորակի վրա, երեխաներ:

Երեխաներ -Այդ ժամանակ մաքուր օդ չի լինի:

-Էլ չենք կարող շնչել:

-Բոլորս կհիվանդանանք:

- Միրգ չի լինի, որ ուտենք:

Դաստիարակ -Ճիշտ է, որովհետև անտառները մեր մոլորակի թոքերն են, երեխաներ, որոնք մեզ թթվածին են տալիս, որ մենք մաքուր օդ շնչենք և չհիվանդանանք: Անտառները նաև այլ կերպ ենք անվանում՝ կանաչ գոտի: Քանի որ անտառներն արթնացել են արդեն, մարդիկ էլ դուրս են եկել հող մշակելու, սկսվել է գարնանացանը: Եթե հիմա մենք դառնանք սերմնացաններ, ապա կարող ենք աճեցնել բարության հասկեր և ցվիրել աշխարհին, և այդ ժամանակ մեր մոլորակը կառողջանա և կորած գույները կվերադառնան: Իսկ հիմա մեզ ի՞նչ է հարկավոր գարնանացանը սկսելու համար:

Երեխաներ -Սերմ է հարկավոր:

-Բայց մենք ոչ մի հատիկ սերմ չունենք:

Դաստիարակը արկղիկի միջից հանում է փոքրիկ քսակով սերմերը և բաժանում սերմնացան տղաներին:

Երեխա -Բայց այս մեկ հատիկ սերմը ինչպե՞ս կօգնի մեզ և մեր մոլորակին:

Դաստիարակ -Սրանք սովորական հատիկներ չեն, սրանք բարության սերմեր են: Եկեք հիշենք, թե ինչ գեղեցիկ սովորություն ունեն մեր սերմնացանները:

Երեխաներ -Բարությամբ պետք է տնկենք, որ հատիկները ծիլ տան և աճեն:

Դաստիարակ -Ճիշտ է, եկեք դառնանք բարության սերմնացաններ հատիկները բարի սրտով հողը դնենք:

Տարազ հագած տղաները շրջան են կազմում և խմբով արտասանում՝ ցույց տալով գործողությունները (Տե՛ս Նկար 2).

–Էս մի բուռը՝ երկնքի թռչուններին,

Որ մեր արտը մորեխներից պաշտպանեն,

Էս մի բուռը՝տնից հեռու եղողներին,

Որ սոված չմնան,

Էս էլ ցանենք, որ բարության հասկ աճեցնենք:

Սերմնացանները կատարում են «Կոտ ու կես» ժողովրդական երգ–պարը:

Դաստիարակ –Բարությամբ ցանեցինք մեր սերմերը, իսկ հիմա մեր արտին ի՞նչ է հարկավոր:

Աղջիկներ –Անձրև, անձրև, ցած արի,

Բլսցուր ցորեն ու գարի:

Աղջիկները կատարում են Կոմիտասի «Անձրև եկավ» երգի առաջին մասը՝ միաժամանակ կատարելով պարային շարժումներ:

Դաստիարակ –Անձրևից հետո ի՞նչ է պետք մեր ծիլերին, երեխաներ:

Երեխաներ –Արև, արև, արի դուրս,

Քեզ բերել ենք աչքի լույս:

Դաստիարակը ներս է բերում հասկերով պատրաստված փոքրիկ արտը, Երկիր մոլորակի գունավոր պատկերը (Տե՛ս Նկար 3):

Երեխաներն ուրախ ծափահարում են:

–Շնորհակալ եմ, երեխաներ, որ օգնեցիք մեր մոլորակին վերադարձնել կորած գույները: Հիմա ի՞նչ տրամադրություն ունի մեր մոլորակը, ինչպիսի՞ն է նա հիմա:

Երեխաներ –Մոլորակն ուրախ է:

– Նա ժպտում է:

– Մոլորակն էլի գունավոր է:

Դաստիարակ – Ի՞նչ սովորեցիք այսօր, երեխաներ :

Երեխաներ –Մենք պետք է խնամենք բնությունը:

–Երբ մենք տրորում ենք ծաղիկները, մոլորակը տխրում է:

–Մենք կխնամենք ու չենք կոտրի ծառի ճյուղերը:

–Եթե մենք փչացնենք բնությունը, մարդուր օդ չենք կարող շնչել:

Դաստիարակ –Բնության ո՞ր երևույթն օգնեց, որ հատիկները ծիլ տան:

Երեխաներ –Անձրևն օգնեց:

Դաստիարակ –Իսկ հիմա եկեք բարության սերմերը տարածենք աշխարհով մեկ և միասին փրկենք մեր Երկիր մոլորակի կյանքը: Բնության ո՞ր երևույթը կօգնի մեզ:

Երեխաներ –Քամին կօգնի մեզ:

Դաստիարակ –Ճիշտ է, բայց եկեք մենք էլ օգնենք քամուն, որ նա սլանա հեռու–հեռու և բարության սերմերը տանի իր հետ:

Երեխաները փչում են երևակայական հատիկները:

Դաստիարակ –Շնորհակալություն, երեխաներ, բայց ես անտառից ինձ հետ մի նամակ եմ բերել, որ կարդամ ձեզ համար:

Դաստիարակը արկղիկից հանում է մի նամակ և ընթերցում. «Բարև, սիրելի՛ փոքրիկներ: Ես անտառի մի փոքրիկ ծառ եմ և ձեզ պես սիրում եմ, երբ ինձ խնամում են, սիրում: Գիտե՞ք, երբ ծառի ճյուղը կոտրվում է, նա էլ է ձեզ պես ցավ զգում և արտասվում: Իսկ անտառի բոլոր ծառերը ձեզ թթվածին և սնունդ են տալիս:

Մի կոտրեք մեր ճյուղերը, խնդրում ենք ձեզ: Սիրելի՜ փոքրիկներ, դուք ձեր բարությամբ միշտ վառ եք պահում մեր Երկիր մոլորակի գույները: Մենք շատ ենք սիրում մարդկանց և խնդրում ենք, որ դուք էլ սիրեք բնությունն ու խնամեք:

Անտառի մի փոքրիկ ծառ»:

Դաստիարակ –Քանի որ մենք այսօր բարության հասկեր աճեցրինք և տարածեցինք աշխարհով մեկ, եկեք բարության հաց թխենք և նվիրենք իրար:

Երեխաները կատարում են համապատասխան շարժումներ

–Եկեք մաղենք ալյուրը,

Եկեք հունցենք խմորը,

Գրտնակ վերցնենք, գրտնակենք,

Բարության հաց մենք թխենք

ԵԻ այդ հացը կտրտենք

Ու բոլորին նվիրենք,

Անուշ լինի :

Դաստիարակ –Շնորհակալություն, սիրելի փոքրիկներ, որ օգնեցիք մեր մոլորակին ձեր բարությամբ: Իսկ հիմա ես պետք է գնամ անտառ, որպեսզի պաշտպանեմ բնությունը չար մարդկանցից: Մնաք բարով:

Երեխաներ –Ցտեսություն, Կանաչ փերի:

Եզրակացություն

Եթե վաղ տարիքից երեխաների մոտ ձևավորվեն էկոլոգիական պատկերացումներ և հիմք դրվի էկոլոգիական դաստիարակության համար, ապա ավագ նախադպրոցական տարիքում կունենանք բնության հանդեպ ստացավ և հոգատար սաներ, որոնք իրենց բարեվարքության և բնության անբաժան մասնիկը լինելու գիտակցության արդյունքում կլինեն պատասխանատու իրենց արարքների համար՝ դառնալով փոքրիկ բնապահպաններ:

Նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման գործընթացի արդյունավետությանը նպաստում են թեմատիկ և ինտեգրված պարապմունքները՝ խթանելով երեխաների ճանաչողական և հուզական համակողմանի զարգացումը:

Ներկայացված պարապմունքի ընթացքում շատ բարձր էր բոլոր երեխաների հուզականությունը, իրենց դերի գիտակցումը և դրա պատճառահետևանքային կապը մոլորակի փրկության գործում: Տարբեր հնարքների և մեթոդների կիրառումը, միջառարկայական կապեր ստեղծելը պարապմունքների ընթացքում նպաստում են գործընթացի համակողմանի զարգացմանը՝ ապահովելով երեխաների իմացական և հուզական դաշտի ակտիվությունը:

Նամակի ընթերցումից հետո երեխաներից մեկն արտասվելով ասաց. «Ես էլ ոչ մի ծաղիկ չեմ պոկի, որ նրանք լաց չլինեն»:

Ես եկա այն եզրահանգման, որ երեխաների վաղվա օրը կառուցվում է մանկապարտեզում ամեն վայրկյան, ամեն ժամ, ամեն օր՝ դաստիարակների հմուտ բեղուն աշխատանքի շնորհիվ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Աֆորիզմներ», Երևան, «Հայաստան » 1989

2.«Մանկապարտեզի միջին խմբի (4-5տարեկանների) կրթական համալիր ծրագիր», ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ 2011

3.«Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ», 2021

4.«Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր» Միջին խումբ (4-5 տարեկաններ), Երևան 2021

5.«Նախադպրոցական մանկավարժություն » Ս.Ա.Մարության, Ա.Մ. Դալլաբյան,

Երևան 2005

6.«Նախաշավիղ» 3.2012

7. hakhunts.wordpress.com

Հավելվածներ

Նկար **1**

Նկար 2

Նկար 3